ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 282- Ա **07 նոյեմբերի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25 - Ի N 44 - Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների, դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգող մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2001 թվականի սեպտեմբերի 4-ի N 109-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 44–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սանոսյան Գ.	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
Զոհրաբյան Ա.	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Համբարձումյան Հ.	- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Բուդումյան Խ.	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
Ղուրշուդյան Մ.	- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ
Գասպարյան Ս.	- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ

Մելքոնյան Ս. - «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ»-ի ղեկավար /համաձայնությամբ/

Հազեյան Ն. - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Կոտայքի և Գեղարքունիքի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/»:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ